

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 ուղիորդի համար 10 ծր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի համար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Անկերկայի համար Տարեկան 2.50 ռ.
 Վեցամսեայ 1.25 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Դրանցումն սոցիալական երեսակ համար 40 սանթիմ կ. իսկ վերջին երեսակ համար 20 սանթիմ կ. երեսակն առ ի անգամներու համար 20 Օլո գեղջ կըլլայ:

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Կանակ և գրավ գրիկի
 ԽՆԻՍՏՈՒՄԻԱՆՍ ԽԱՍԿԻՆ
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չին տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՈՒՍՈՒՍԸ ՍԿՍՎՈՒՄ Է

Ուսումնական տարու սկսվելուն մնացել է ընդամենը երկու շաբաթ: Ծուռով Բուլղարիայի հայ ուսումնարանները բացվելու են հայաբնակ փոքրիկ քաղաքներում արդեօք ուսուցչական մարմինները կազմու պատրաստ են կրթական գործը բարեխղճաբար շարունակելու թէ ոչ. անզեկու թիւն չունենք:

Բայց Թիւրիպոլիս, Բուսուք և Վառնա դեռ ուսուցչական մարմինները պատրաստ չեն:

Այդ քաղաքները մէջ է պարում հայ բազմութիւնը. դրանք պէտք է ամէն կերպ, հասարակական գործի տեսակետով, օրինակ հանդիսանան փոքրիկ քաղաքներին, բայց ընդհակառակը ամենից յետ են մնացել:

Ինչո՞ւ են այդ քաղաքները ետ մնացել. ինչո՞ւ մինչև հիմա ուսուցչական խմբերը կազմուած չեն: Որովհետեւ դպրոցի գործը գլխաւորապէս վերաբերում ժողովրդի չբաւոր դասակարգի կրթութեան. և վերջապէս աշակերտութիւնը, քմահաճոյքը, եսական կուսակցականութիւնը առաջին տեղն է բռնում մեր դպրոցը զեկավարող ազաների շրջանում: Ազաները ուզում են իրանց քէֆին յարմար ուսուցչական խմբեր կազմել. որքան կարելի է ոգէտ, կակուղ, հլու և ստրուկ տարրից. իսկ ժողովրդի լուսամիտ դասակարգը հակառակում է, և այդ պատճառով էլ ահա գործը ետ է ընկնում, քաջքովում մընչեւ որ ազաները և ժողովրդի լաւ սարքը միմեանց փոխադարձ զիջումներ անեն. մինչև հանգին այնպիսի մի որոշման, որ թէ աղայի քէյֆը չը կոտորվի և թէ կրթական գործը բոլորովին չը զլաւովի:

Ինչ արած, պէտք է դիմանալ համբերել...

Այո պէտք է դիմանալ. բայց այդ չէ նշանակում թէ պէտք է ձեռքերը ծալել, նստել և ուսում:

նարանները շարունակաբար թողնել այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք այդ մարմինները հիմնարկութիւնները իրանց առն ու խանութները կարծելով, նրանում ծառայող ուսուցիչներին հետ վարվում են այնպէս, ինչպէս իրանց խանութներում ծառայող գործակատարներին հետ. ու մեր կրթական հիմնարկութիւնները հնազարեան ապուշներին հանգստավայր դարձնում:

Պէտք է կռիւ մղել այն տարրի դէմ, որ իր քէֆին համեմատ դպրոցները յանձնում է հոտած ուղեղով զանազան ապուշներին և այլատեսում մեր մատաղ սերունդը:

Օրինաւոր, եռնդուն և յարատեւ կռիւ:

Եւ այդ կռիւը իր արդիւնքը կունենայ. որովհետեւ ամէն տեղ էլ հայութիւնը ունի իր ընդունակ, բարեխիղճ և ժողովրդի իսկական շահերը բնականաբար անդամներ:

ՎԱՐՆԱ

ՀՐԱՊԱՐԱԿԱՒ ՔՆՆԵՆԻ ԿԱՍ ԶԸ ՔՆՆԵՆԻ

Բայց այս ալ մէկի. առաջադրեալ ուղղութեան չընդունաւ համար ի կարգին յիշեցնել կուտանք թէ՛ Պ. Պիօն ինքն ալ Պ. Զարգարի հետ կընդունէր «ամէն երկրի մէջ և ամէն տեղ գտնուած վարժարաններու քնննուիլը». միայն կաւելցնէր որ կը քննեն «բայց ոչ մեղի պէս»: Ասոր մենք ալ ըսելիք չունինք, և կը պնդենք այս, անոնց «քննութիւնները մեր իններուն հետ չի բաղդատուիր»: Եւ այս լաւ: Սակայն թող չզարմանայ պարոնը, երբ մենք զինքն ալ կանխելով կրկինք թէ՛ իրապէս այդ «անբաղդատութեան» մէջն է բուն գաղտնիքն, որ մէկ կողմէն եւրոպացիներուն (խօսքս կրթականութեան ախպար եւրոպացիներուն) հրապարակային քննութիւնը շնչելու իրաւունքը տուած ատեն, միւս կողմէն ազգուպէս կը պարտատրէ մեզ զայն գործադրելու, դեռ ժամանակ մը եւս: Ահա թէ,

նոր կը կայանայ այդ գաղտնիքը: Պահ մը աչքի առչել բերելով՝ եւրոպական դպրոցներուն նպատակայարմաբ, գունագեղ՝ բայց միակերպ ծրագիրը, իրենց կառավարութեանց կողմէ եղած հսկայ զոհողութիւնները և աշակերտը հսկողութիւնը, հոգեբան և հիանալի մանկավարժներու հոծ գոյութիւնը, բարձրագոյն համալսարաններէ վկայեալ հմուտ ուսուցիչներուն պատրաստ ծառայութիւնը, որոնց կցենք նաև կրթական գործի մէջ ամենայնիւ ձեռնհաս հոգաբարձութեանց խնամածութիւնը, և վերջապէս ամէն դասակարգի պաշտօնեաներուն օրինակելի պարաճանաչութիւնն ու կարգապահութիւնը, ալ ինչպէս չըտապենք վճռել թէ, կատարելութեանց զէնթիւն հասած սոյն գունակ սքանչելի հաստատութեանց համար բացառականապէս աւելորդ կրնան սեպուիլ հրապարակային քննութիւնները, ըլլան «զօնթօրի» և ըլլան ուրիշ նպատակի համար: Բայց եկէք, սեսէք, որ այդ մարդիկ՝ եւրոպացիք, հակառակ Պ. Պիօնի և իր պաշտած ջոկ մը մանկավարժներուն յուսահատ ազդակին, դարձեալ կը սարքեն տարեկան, և թէ կուզէք, նաև վեցամսեայ, եռամսեայ և նոյնիսկ միամսեայ «փոռաւոր քննութիւններ»:

Պարոն յօգուածագիր, հպարտ մենք, որ դեռ կրթական խանձարուքի մէջ, հիմնովին հեռու վերը յիշուած կատարելութեանց տարրերը բնէն, մատնուած մանաւանդ կարող կրթիչներու և հասկացող հոգաբարձուներու սոսկալի սովի մը, թո՛ղ անուշներու կամ տնօրէններու մշտնջենական լացակայութիւնը. ինչպէ՞ս կրնանք վստահիլ մեր արդէն խախտու ու երբուն վարժարանները՝ ամենուս պէս թերուս կարգ մը ուսուցիչներու քմահաճոյքին և թմրած խղճմտութեանը, այն ալ առանց հրապարակային քննութեան կամ հաշիւ պահանջելու:

Ո՛չ, այդ կարելի բան չէ, զի «գէթ առ այժմ մեկ համար հրա-

պարակային քննութեան հեռացման գաղափարը չափազանց տարածամած և անպայման անհեռատեսութեան նշանակ է՝ ըստ իս: Գանի որ կրթական նախարար և կամ ըսեմ վերին մանրաքննիչ հսկողներ չունինք, հաւատացէ՛ք, եթէ հրապարակային քննութեան փոքրիկ վախն ալ չըլլայ, մեր ուսուցիչներէն շատերը (հասցուագրու բացառութիւնները յարգելի են) տարին տասն ամիս ալ կողմի վրայ կը պառկին և կամ իրենց անձնական ու կուսակցական կիրքերով կը զբաղին, ապացոյցներ առատ են:

Իուցէ այս մասին ալ Պ. Պիօն նորեւեկ վարդապետութեամբ մը առարկել թէ, անպատե հոթեանց տեղի չը տալու և ուսուցիչներու աշխատութեանց արդիւնք տեսնելու համար, պէտք են դպրոցներու դռները կանակի վրայ բաց ըլլան՝ ամէն ազգայիններու առջեւ, որ ուզած ամէն օր անխտիր ներկայ գտնուին դասաւանդութեանց ատեն և այլն: Այս ալ հիւանդ մտքի մտածում մըն է, որովհետեւ այդ եղանակով արդեօք կրնանք ապահով ըլլալ որ այցելուներուն ամէնքն ալ իրենց ուսուցիչներուն կարողութիւնը գնահատելու չափ խելք պիտի ունենան, ո՛չ, կամ կրնանք ստիպել, որ բանէ հասկցող մի քանի անձեր անպատճառ վարժարան այցելեն տարուան ընթացքին մէջ, չեմ կարծեր. և եթէ այո՛, այդ այցելութիւնք ալ հրապարակային քննութեանց մի մանրանկարը չե՞ն. ուրեմն ինչպէս Պ. Պիօն թող կուտայ, որ այլ ձեւի մը տակ աշակերտք նեղուին ներկաներէն: Թողունք թէ, մեր վարպետ պատուիւնները հազար ու մէկ կեղծիքներով այդ եկողներն ալ կը համոզեն կամ կը խարխրեն թութակօրէն սովորեցուցած քանի մը գասեր հանելով մէջտեղ և անոնց աչքին վայլուն փոշի մը փչելով:

Ս. ԳՈՌԱՅՐ

(Շարունակելի)

—) (—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պօլիս, 14 Օգոստոս

Կրկնակի կաթողիկոսութեան «անվերջ» հարցը վերջ մը տնեցաւ: Երբ Օրմանեան փաշան տեսաւ որ երբէք իրեն գերագոյն փափաքին չի պիտի հասնի՝ այսինքն չի պիտի կրնայ իր ճարպոտ անձին մէջ միացնել «Պատրիարք Կ. Պօլսոյ և Կաթողիկոս Տանն Կրկնակի» «ընտրիկ» տիտղոսները՝ ան առանց զազրեցաւէն դրիկներ լարելէ ու Բ. Գրան ալ իրատիէ մը հանել առաւ որու համաձայն՝ իբր թէ «հայոց պատրիկին բողոքները լուսնայն, Կրկնակի կաթողիկոսութեան հարցն ալ վճռուեցաւ»: Բայց էտպէս Գուռը իրեն ուղածն ըրաւ. օրինական ընտրութիւնը բեկանեցին և այժմ նոր ընտրութիւն նշանակելու են: Հոս պատրաստութիւններ կը տեսնուին ընտրութիւններու համար ատենապետ և ատենադպիր զրկել: Պատրիարքի քարտուղար Ներսէս վարդապետը նշանակուած է ատենադպիր, իսկ Երոստայիմայ եպիսկոպոսն ընէ Ս. Խաչատրեան՝ ատենապետ:

Օգոստոս 14ն է այսօր. պանքայի դէպքի տարեգարձը. 5 օրէն եւս ուրիշ տարեգարձ մըն ալ կունենանք՝ կարմիր արիւնտ տարեգարձ մը՝ Համիտին գահակալութեան օրը. . . երջանիկ վեհապետին երջանիկ մայրաքաղաքը հապճեպով կը պատրաստուի աստիճան փառիշտահին գահակալութեան, ամէն կողմ հրավառութեան պատրաստութիւններ և այլն:

Կենթադրուի որ Ղարսապի նորաստեղծ թագաժառանգը իր սիրուն կնկանը հետ հոս պիտի գան վայելելու Համիտին գահակալութեան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ Օ Ռ Կ

Բարիկ «Մօսկ» անունով տեղ մը կայ, ուր ի տես կը գրուին ամէն օր այս հեկայ քաղաքին մէջ գտնուած մարդկային անձանցով զիտակները: Ընդհանրապէս այս զիտակները Սէն գետին կը հանուին, և և մեծ մասամբ անձնասպանի զիտակներ են: Անցեալ օր հետաքրքրութեան մը դուռ՝ ելայ գացի տեսնելու այս սոսկայի վայրը: Դեռ զիտակներուն սրահէն ներս չմտած՝ դուրսի կողմը հանդիսատես կըլլամ պատէն կախուած արտուր լուսանկարներու խումբի մը: Դիտակները շատ շուտ կը վերցուին, ու նորերը հոն ի տես կը գրուին. վերցուածներու լուսանկարները հանելով, ժամանակ մըն ալ զանոնք կը կախեն սրահին գրտի կողմը. այդ լուսանկարներն ալ իրենց կարգին հետգնեց կը վերցուին՝ աւելի նո-

կալութեան փառահեղ տարեգարձը: Բարի ճանապարհ:

Բանտարկութիւնները, ձերբակալութիւնները կը շարունակուին: Զերբակալուածներու մէջ նոյնիսկ «մանուկներ» կան: Շատերը կը քշուին իրենց հայրենիքը կամ ծննդավայրը, քանի մը հողի ալ ազատ արձակուած են: Այս ամէնը օգոստոս 19 տօնի առթիւ կըլլայ. Սուրբանը հայրա՛ն շնորհ մը պիտի ընէ՝ ի զուր տեղը անմեղ ձերբակալուածները վեհանձնաբար ազատելով:

Երկու բարձրատիճան պաշտօնեաներ Բ. Գրան մէջ երկուստեք մը տղու մը տիրանալու համար՝ կռիւի կը բռնուին և լա՛ւ մը զիրար կը ձեռնեն: Լուր կը պատէր՝ թէ այդ դէպքը նախարարական ճգնաժամ մը առաջացուցր է: Եւ ահա «Աժան» տը ֆօնսիսթանի ինօրըք պաշտօնապէս կը հերքէ անգլիական թերթերու այս լուրը «Այո՛, ճգնաժամ չեղաւ, որովհետեւ վէճի աւարկայ երիտասարդը հարցը բարեկամաբար վճռեց. . . իր անձը զոհելով. . . միայն աւելի ստակ վճարողին. միւս փաշան ալ սըրդոպեցաւ ու չլսուեցաւ. տղուն հետը. . .

ԲԱԺ

Փ. Պօլիս, 5 Օգոստոս

«Իրաւունք» ի ներկայ տարուան 55րդ թուին մէջ Կորիւն, իսկ «Շարժում»-ի 150րդ թուին մէջ Տօքթ. Փափազեանի ստորագրութեան տակ երկու յօդուածներ երեւցան իմ տեղույս թաղականակաւ ընտրութեան մասին տուած յաւելումովան տեղեկութեանս զէմ, որոնք իբր թէ կը ջանային հերքել զրաձներս:

Առաջինին մէջ Պ. յօդուածա-

դիրը այնպէս կուզէր ցուցնել թէ՛ ևս Տօքթ. Փափազեանը անուանարկելու համար այդ տողերը գրած եմ, քանի որ ան եղած է երկու կուսակցութեանց մէջ համեմատութիւն զոյացնողը, ու ինք համալին քուէն չընդունելով ընտրութեան ժողովին մէկ որոշումը գործադրած է:

Պ. Կորիւնի գրածներէն այնպէս կեղծակցուցնեմ թէ՛ ինք անտեղեակ է համեմատութեան իրազօրծութեան մանրամասնութեանց: Պ. Կորիւն պէտք չէ ուրանայ որ ընդդիմադիր կուսակցութեան պետերը ամէն պատասխանատուութիւն իրենց վրայ առնելով, հակառակ իրենց գաղափարակիցներուն միահամուռ ընդդիմութեան, պատասխանեցին ընտրութեան ժողովին անակնկալ հրաւերին, և լոկ անոնց ազգային տեղական շահերուն համար յանձն առած համոզումի և սկզբունքի զոհողութեամբ կարելի եղաւ համեմատութիւնը գոյացնել: Եթէ հակառակորդներու կողմէ ցոյց տրուած մերձեցումի նշանները ընդդիմադիր կուսակցութեան պետերուն բարոյական գոհունակութիւն մը պատճառած չըլլային արդէն, թերեւս քանի մը տառնեակ Տօքթ. Փափազեաններ չի յաջողէին ամենագոյն համեմատութիւն մը իսկ առաջ բերելու:

Սակայն ենթագրելով թէ Տօքթ. Փափազեան համեմատութեան գաղափարին ամենաշեղծ տխրեան իսկ եղած ըլլայ, իմ գրածս երբեք այդ մասին ակնարկութիւն մը չէր պարունակէր: Ես միակ կուզէի ցոյց առ թէ Տօքթօրը իրաւունքի բռնաբարութիւնը ըրաւ «համալին» քուէն չընդունելով:

Արդարեւ երբ 4—5 տարի է ի վեր հոս հաստատուած բռնակիր մը մօտեցաւ քուէ տալու, Տօքթ. Փափազեան տետրակին մէջ այդ

անձին անունը փնտռեց, զոր չի գտաւ. այն ատեն արհեստը հարցուց. «ես համալ եմ» ըսաւ մարդը, որուն Տօքթօրը պատասխանեց թէ «համալի քուէն չընդունուիր» և սխալ բացատրել ընտրութեան ժողովին որոշումը, Արդ կը հարցնենք Տօքթ. Փափազեանի:

1. Ընտրութեան ժողովը ի՞նչ նկատումով բռնակիրութիւն որոշ գործ չի նկատել, քանի որ մինչեւ իսկ 10—15 տարիներ է ի վեր գործով պարապող անհատներ կան քաղաքիս մէջ և քանի որ անիկա առանձին արհեստ մըն է:

2. Ի՞նչ տարբերութիւն կայ վաճառատան մէջ ամառականով աշխատող գրագիրի մը, մարքան ապրանք հանող պաշտօնեայի մը և նմանապէս ամառականով աշխատող բռնակիրի միջեւ, որ մէկը քուէի իրաւունք կունենայ և միւսը չունենար:

3. Եթէ բռնակիրներու քուէն, ըստ ընտրութեան ժողովի որոշման, չի պիտի ընդունուէր, ինչո՞ւ ընդունուեցաւ Բարսեղ Պ. Մանուկեան եղբարց քով բռնակիր Արշակի քուէն:

4. Եթէ առարկուի թէ այս վերջինը նշանուած էր, այն ատեն կը հարցնենք ինչո՞ւ չընդունուեցաւ նմանապէս նշանուած Պոլսեցի Ագրիպաս անուն անձին քուէն որ բռնակիր ալ չէ, այլ ձուկ ծախող:

Ուսկից կերեւայ թէ ընտրութեան ժողովը իր քմահաճոյքին համեմատ ուղած է վարուել քուէարկութեան միջոցին, ինչ որ յետոյ ինքն ալ զգաց. իսկ Տօքթ. Փափազեան գործի զրուս գրտունելով այդ միջոցին ուղածին պէս կորել չափել աշխատած է:

Ես կրնայի Պ. Կորիւնի անհատական յարձակումներուն դէմ նմանօրինակ յարձակումներով պատասխանել և Տօքթ. Փափազ-

րերուն տեղ բանալու համար. և ահա այսպէս անվերջանալի է ան: Լուսանկարները զիտակով կը զգայի որ անոնց զէմքերը յուսահատ բողոքներու արտայայտութիւնն ունենին, բայց կը մտածէի թէ որո՞ւ կը բողոքէին: Լուսանկարները զիտակէ ու խորագէս յուղուելէ վերջ կանցնիմ ներսի սրահը. և կը տեսնեմ երեք նոր զիտակներ՝ ի տես զրուելու յարմար ձեւով պատկերացած յատուկ մահճակալներու մէջ: Ասոնց վրայէն, զիտակ կերելի որ ազգատ յուսահատ մարդիկ են. մին՝ կարծես վրէժխնդիր նախածք մը ունէր, միւս երկուք իրենց ցաւալի վիճակին համակերպողի մը զէմքը կը ներկայացնէին: Երկուքին համար կըսէին թէ անօթութեան չղի մանալով անձնասպան կղեր էին. իսկ միւսին համար կ'իմացնէին թէ հացի կառքի մը զո՞հ պացեր է:

Այս շատ տխուր և իրական պատկերը, այս անարկու տեսարանը չը կրցայ չինդ վայրկեանէն աւելի զիտակ. ինքզինքս նստեցի՝ գուրս, ու սկսայ Սէն գետի քարափանց

վրայ ման գալ՝ խորունկ մտածութեան մէջ ընկղմած: Այսպէս երկար ատեն ման եկայ ատանց տեսնելու անցած տեղերս՝ և ինքնիրենը խօսող խենդերու պէս ատեն ատեն բացագանչելով. Ոննդի պէս ըսի. և իրօք զիտակով կեանքի սկզբնաւորութեանց ցարդ ունեցած ընթացքս. և այժմ իբր փոխձուռ, ճանչնալով աշխարհը, աղէկ կը հասկնամ թէ իրօք խենդ մը եղած եմ, բայց այսուհետեւ ալ խելացի ըլլալս օգուտ մը չունէր:

Այն օրը մինչեւ իրիկուն անհանգիստ էի. իսկ զիտակը վերջովեալ ու տարօրինակ երազներով լի քուն մը ունեցայ, և կեռայի տեսարանին վրայ թողած սոսկայի սպաւորութիւնը և մտքիս մէջ առաջ բերած տխուր խորհրդածութիւնները չեն անցած: Երջանակութեանը և թշուառութեանը այս քաղքին մէջ շատ զօրաւոր կերպով շնչուած է. այնուհետ որ մարդիկ կան հոս, որ եղիւմը իրենց համար ստեղծելու չափ կարող եղած են և մարդիկ ալ կան որ անձնասպան

ըլլալու չափ թշուառ եղած են: Հոս ունեցողներ կան, և առեւ յաւ ունին. իսկ չունեցողներ կան՝ շատ ու շատ որ բացարձակապէս չունին:

Բարիկ «Շանգ Երիզէն» և անոր շուրջը ուրիշ շատ մը «ավրիւններ կը բնակին Բարիկի հարուստ և ազնուական պատկարգը. ուր կը վերստան փառաւոր սեփական կառքեր լծուած առիւծի պէս ձիերով, որոնց մէջ բազմած կան անսովոր մահկանացուներ: Այս անսովոր մահկանացուները Բարիկը մէջերնին բաժնած են. ոմանք չէնքերու կը տիրապետեն: ոմանք հրապարակին առեւտուրին, ոմանք արտադրութիւններուն և ոմանք ալ կառավարական պաշտօններուն: Ասոնց ուսելիքը անհատոր սեղերէ կուգայ. յատուկ իրենց համար. զիտակ՝ Պօրտօն, Մալակայէն և ուրիշ ամէն պտղերը իրենց կարգին. ասոնք շատ պզտիկ խումբ մըն են որ եղիւմը երկրի վրայ շինած են իրենց համար, միլիոն իրեց հաւաք. ու

եանի անձին համար շատ լուրջ
 քննարկներու զէմ ալ ցու-
 ցնել թէ ինչպէ՞ս նոյն Տօք-
 թէօրը, տարիներ առաջ, տեղ-
 ւայ թաղ. խորհրդոյ ժողովէն
 արտաքսուած է իր անպատեհ
 մէկ ընթացքին համար, և թէ
 ինչպէ՞ս գեռ վերջերս պաշտօն
 մը ձեռք ձգելու համար Սօֆիա
 գտնուած ատեն, բարձրատիճան
 պետական պաշտօնայի մը ուղած
 է կլեցնել թէ Ֆիլիպէի ազգա-
 յին գործերուն խառնակութեանց
 միակ պատճառը գաղթական սրի-
 կաներ են և թէ՛ անոնց արտաք-
 սուճը կը բաւէ քաղաքը հանդար-
 տեցնելու համար: Բայց իմ նպա-
 տակը անհասկանալի յարձակումներ
 ընել չէ եւ ոչ ալ այս ու այն կէտը
 պատրուակ բռնելով, ժամանակէ
 մը ի վեր մոխրի տակ թաղուած
 դժոխային վէճերը վերարձար-
 ձել: Ես լոկ իրաւունքի բռնա-
 բարութ մը ուղեցի մասնանիչը-
 նել: Տօքթ. Փափազեան կամ
 Տօքթ. Մարտիրոսեան, ի՞նչ ա-
 նուն ալ ըլլա՞ր, անձը նշանակու-
 թիւն չունէր, և ես Տօքթէօրին
 անունը յիշեցի որովհետեւ ան էր
 այդ միջոցին գործի վրայ զբա-
 նուողը:

Գալով Տօքթէօրին հերքման,
 վերինները իրեն ալ իբր պա-
 տասխան ընդունել ինդրիէ ետ-
 քը, կը յորդորեմ զինքը որ այն-
 քան յաւակնոտ չըլլայ նահապի
 մը պատասխանելու համար, որ
 գուցէ իրմէ հազար անգամ սեւի
 բարոյական արժանիք կրնայ ու-
 նենալ, իրաւ որ հիմայ ուրիշի
 մը գրութիւնը արհամարհել «մօ-
 տադի կարգ անցած է և ամէն
 անգամ որ մէկը իր անձին զէմ
 եղած գրութիւն մը ուզէ պատաս-
 խանել, նախ մէկ քանի խօսքով
 իր արհամարհանքը! Կը ջանայ
 յայտնել, Բայց ի՞նչ արհամար-
 հանք, քանի որ անկէ ետք սիւ-
 նակներ կը լեցնէ ինքզինքը ար-
 դարայնելու համար իր արհա-

մարհամ անձին առջեւ... ես այդ
 կարգի գերասանական ձեւերը
 շատ սիրողներէն չըլլալով, կրկին
 հրապարակ կուգամ Պ. Կորիւնի և
 Տօքթ. Փափազեանի միանգամայն
 պատասխանելու որ, ուրիշ ան-
 գամ, այդ տեսակ պարագաներու
 հանդէպ, բնաւ նիւթէն չի շե-
 ցին ալ ու ձախ անտեղի յարձա-
 կումներ ընելու համար, որոնց-
 մով թերեւս այդ յօդուածագիր-
 ները կը ջանան պարտել իրենց
 հակասական, կտոր փրթուծ
 պաշտպանողականը:

ՇԱՀԱՊ

Թաւրիզ, 31 Յուլիս

Ռուսական արշաւանքը սկսվեց
 դէպի Պարսկաստան, մանաւանդ
 դէպի Ասորպատական. հայերի
 աչքերը լսյս, որ ենթարկվելու
 և վայելելու են իշխան Գոլիցին-
 ների հարազատ զաւակներին շնոր-
 հը և ազդեցութիւնը:

Պարսից անհեռատես կառավա-
 րութիւնը 70 տարվայ պայմանա-
 ժամով ամբողջ Ղարաղաչի (Փայ-
 տակարան) հանքերը կապալով
 ուսններին տեց նրանց շատ
 նպատաւոր պայմաններով:

Ռուսական ընկերութիւնը այդ
 հանքերը շահագործելու է, ան-
 շուշտ ի վնաս բնիկ հայերի: Ղա-
 րաղաչի հայերի մեծ մասը եր-
 կաթի հանքերից մեծ օգուտ էր
 քաղում, նախնական միջոցնե-
 րով արտահանում և Թաւրիզ էր
 բերում վաճառելու: Անտառնե-
 րից էլ է զրկվելու, որովհետեւ
 նոյն ընկերութեան իրաւունք է
 արված պէտքի չափ, ազատ ան-
 առանքից փայտ կտրել: Ան-
 շուշտ կարիքի չափը ուսնների
 ձեռքում անհամբեմատարար մե-
 ծանալու է. և դար զէմ ոչ ոք չէ
 բողբոջելու. պարսիկը համարձա-
 կութիւն չունի ուսի զէմ բողբո-
 ջելու:

Այս շարժում այստեղ հասան
 այդ ընկերութեան ուսն ինժե-

նիօրները և շատով զնալու են
 Ղարաղաչ:
 Բէնտէր-Արասը անշուշտ մի
 օր Ղարաղաչի բազդին կարծա-
 նանայ, հակառակ անգլիացիներին
 տառույցներին: Այսօր քաղաքա-
 կանապէս Պարսկաստանի տիրողը
 ուսն է:

Անցելով օր Պարսկական մի բար-
 բարոս պատմի գործադրվելու-
 ակնատեսն եղայ: Հրապարակում
 խուռն բազմութիւն էր հաւաք-
 ված. հետաքրքրվելով ամբողջ
 ճեղքեցի և առաջ անցայ. Երկու
 աւաղակներ կանգնած էին սար-
 բազներին առաջ. դահիճը առաջ
 անցաւ, բունեց աւաղակներից
 մէկի աջ թեւը և սուրի մի ուժ-
 գին հարեւորով աւաղակի ձեռքը
 տեղիցը թուցրեց. Արիւնը
 սկսեց շատովանի նման Ֆիշալ,
 ընկած ձեռքը վերցրին և պատ-
 մվածի գրպանը դրին: Երկրորդ
 աւաղակին էլ նոյն պատմին են-
 թարկվեց: Աւաղակները այլեւս
 ազատ էին:

Հարկ չկայ ասելու, որ պար-
 սիկներին մէջ կ թական գործը
 տակաւին նահապետական և անդ-
 րաշըհեզեզեան գրութեամբ է շա-
 րունակվում: Երախաները մէ-
 ջիւններում, գեանի վրայ ծալա-
 պատիկ նստած, մալլայի առաջ
 դաս են պատրաստում: Իրանց
 արված կրթութիւնը հասարակ
 ընթերցանութիւնից և մի քիչ էլ
 գրալարութիւնից զէնը չէ
 անցնում:

Մի քանի հասկացող և քիչ
 շատ կրթուած սէյիտներ կամե-
 նալով մի մասնաւոր կանոնաւոր
 վարժարան բաց տնել և այնտեղ
 աւանդել ժամանակիս պահանջին
 համեմատ գիտութիւններ և եւ-
 լոպական լեզուներ, իրանց զէմ
 գրգռեցին պարսիկ հոգեւորակա-
 նութիւնը: Մի բարձրատիճան

պարսիկ հոգեւորական սպառնա-
 ցաւ գործի հեղինակներին սպա-
 նել տալ և դպրոցը քարուքանդ
 անել: Նախաձեռնողները այս
 սպառնալիքի առաջ տեղի տե-
 ցին և դպրոցը փակվեց:

ՄԻՐՁԱ

Թէ ինչո՞վ ԱՌԱՋ
ԿԵՐԹԱՅ ԸՆԹԵՐԱՍԱՆԵՐ

Տեսնելով որ բաւական հետքը-
 րդներ գտնուեցան, թէ բերանացի
 և գրաւոր վառնայի ընթերցարա-
 նին վերարացման ուղի մտաւ առթիւ.
 որոշեցինք հրապարակաւ մի բացա-
 րութիւն տալ:

1898 Օգոստոս ամսոյն մէջ տեղիս
 երկրասարդութիւնը ինկատի առ-
 նելով երկրասարդութեան մտքին
 նպատող հաստատութեան մը ան-
 հրաժեշտութիւնը, որոշեց ընկերա-
 կան ժողով մը գումարելու և պէտք
 եղածը խորհիլ. որոշուեցաւ նախկին
 ընթերցարանը ձեռք առնել, բայց
 ինկատի առնելով որ այդ ընկերու
 համար պէտք պիտի ըլլար 400—500
 ֆր. կլորիկ գումար մը. այդ դիտաւո-
 րութենէն հտ կեցանք. խորհելով
 որ այս գումարը բաւական ժամանակի
 և աշխատութեան կարօտ էր: Ուս-
 աի երկար վիճարանութենէ յետոյ
 որոշուեցաւ կազմել մի նոր «Ընթեր-
 ցասիրաց» ընկերութիւն, որ բնաւ
 ո եւ է կախում եւ կապ չունենար
 նախկին Սիսակեան ընկերութեան.
 որ կը կառավարէր նախկին ընթեր-
 ցարանը: Այս գաղափարը ընդու-
 նուեցաւ ու որոշուեցաւ, ընկերու-
 թեան կազմուելէն յետոյ, բնակի-
 ցութեան մտնել ընթերցարանի շէն-
 քին տիրոջ հետ, որ մտաւորապէս
 400 ֆրանք կը պահանջէր տան
 վարձք, եւ դասի էր յանձնած այն
 անձերը որք իր հետ առաջին անգամ
 սակարկած էին շէնքը, նախկին
 ընթերցարանի համար: Եէնքին աէ-
 րը հաւանած էր 200 ֆրանքի. այն
 պայմանաւ որ մէկ ամիսին իրեն
 վճարուէր. այս վարչական մարմնոյ
 կողմէն ընդունուեցաւ, ու ամիջա-
 պէս ձեռնարկուեցաւ մի թատերական
 երկերով: որովհետեւ միմիայն բա-
 ժանորդսց վճարած գումարովը ան-
 կարելի էր վճարել յիշեալ պարտքը:

անա այս գասակարգին մէջն է որ
 ամենէն ուժեղ կերպով չեջտուած է
 երջանկութիւնը. աշխարհային ամէն
 լիութիւնները, իսկ անդին, բոլոր-
 րովին գուրս այս գասակարգին,
 ամբողջ գուրս, որ օրըն իրուն շա-
 րաչար կաշխատի ազտոտութիւննե-
 րու մէջ թաթխուած. ոմանք գոր-
 ծարաններուն մէջ, ոմանք մեծ վա-
 ճառատներու մէջ, ոմանք հանրա-
 կառքերու մէջ, ոմանք շինութիւն-
 ներու մէջ և ոմանք ոտքի վրայ
 շարաչար վազվզելով: Ասոնք այն
 աստիճան զբաղած են եւ ա՛յն աս-
 տիճան կը յօգնին, որ իրենց ամբող-
 վիճակին, իրենց կորած իրաւունք-
 ներուն վրայ մտածել անգամ չեն
 կարող: Ասոնք ա՛յն աստիճան քիչ
 կը վարձատրուին, որ ստիպում են
 աման ապրելու համար հոսած ուսե-
 լիքներու եւ թուռաւոր ըմպելիներ-
 րով կեանքերին անհամել ու կար-
 ձել: Ասոնցմէ կան որ անգործ են
 և պառկելու սեղ մը չունենալով
 պուլվարներու նստարաններուն վրայ
 կը քնանան, ուր շատ անգամ ու-
 տիկանները զիրենք հանգիստ ալ

չեն թողոր: Ասոնց կիներն ու աղ-
 ջիկները պուլվարներու վրայ փողոց-
 ներու անկիւնները կեցած օտարա-
 կաններ կը փնտենէ՛ պատիւնին ծա-
 խելով դրամ հայթայթելու համար,
 վասն զի ծնողքնին անկարող են նոյն
 իսկ իրենց տարրական պէտքերը
 զոհացնելու. և անա այս գասակար-
 գին մէջն է որ ամենէն աւելի սուր
 կերպով շեջտուած է թշուառութիւնը
 իր բոլոր ձեւերովը. և անա այս
 թշուառներուն մէջ ամենէն քաջերն,
 ամենէն աւելի արժանապատիւներն
 են որ նախապատիւ համարելով մա-
 հը՝ ասանկ թշուառ ու սարուկ
 կեանքէ մը՝ կերթան Սէնը նեատախ-
 ան իրենց երջանկութիւնը ունչաց-
 ման մէջ վնասող: ու անա ասոնց
 զիակներն է, որ կառավարութիւնը
 իր մարդերուն միջոցաւ «Մօտկ» կը
 բերէ և հոն ի տես կը դնէ:

Միթէ ա՛յս քան տարածուն, ա՛յս-
 քան ահաւոր թշուառութիւն. այս-
 քան սուր և աչք ծակող անհաս-
 սարութիւնն առջիւ. ճշմարիտ հեղ-
 նութիւն մը չէ՞ «Բլաս Ռէբուլլիք»

հոյակապ յիշատակարանը, որ ազա-
 տութեան և հաւասարութեան յաղ-
 թանակին համար կառուցած են
 Ֆրանսացիք՝ անամօթաբար գրելով
 «հաւասարութիւն, ազատութիւն և
 կերպարութիւն» բառերը: Այս կողմ
 որ մարդս եւրոպայի մէջ շատ ազատ
 է. ազատ է միայն իր պատիւը ծա-
 խելու և ինքզինք սպաննելու.
 կե՛ցցէ յառաջիմութիւն:

Նկատելով աշխարհի անհուն և
 լայնածաւալ թշուառութիւնը որուն
 մէկ յատակ պատկերն է Բարիկընը՝
 իրովի կը հարցնեմ արամբարնօրէն,
 թէ՛ Աստուած, որ Սէր է, ամէնուս
 բարի է, և որուն անունը Սողոմոն
 զթութիւն անուանած է, անուն մը,
 որուն Պիէլիւրնիւ եպիսկոպոսը ամե-
 նէն աւելի հաւանած ու յարմար գտած
 էր, որ ամենակարող է և ասանց
 որոյ հրամանին տերն մը իսկ չչար-
 ժիր—ինչ որ զինք ամենէն աւելի
 կը դատապարտէ— Աստուած կըսեմ
 իւրովի, արդեօք ի՞նչով պիտի մխի-
 թարէ այս բոլոր դժբաղդները. յա-
 ւիտենակա՞ն կեանքով: Ա՛խ յաւի-
 տենակա՞ն կեանք. միակ չարիքը որ

մարդկութիւնը կործանած է և ա-
 նոր բնական աճումը ու զարգացու-
 մը վերաւորած է հակարեակա՞ն ուղ-
 ղութիւն մը աւալով անոր զարգա-
 ցումին. միակ զօրաւոր չլիւն որ
 կապած է մարդուն թեւերը. չլիւն որ
 մը ուրկէ աւելի զօրաւորը երեւակա-
 յել՝ մարդիկը զսպելու և ափ մը
 մարդսց գերի դարձնելու համար՝
 անկարելի էր, քսածարցակապիս ան-
 կարելի:

Չէ՛ հս հոս աւելի աղէկ կը
 մտածեմ արդեօք Աստուած ալ
 կաշառուած է այս երկրին (աշ-
 խարհին) հարուստներէն ու անոնց
 գործերը միայն կը նայի և առաջ
 կը տանի. անոր համար է որ անոնց
 ամէն բանին լիութիւն տուած է:
 Արդ, քանի որ մենք, անժառանգ-
 ներս, չենք կարող կաշառել Աս-
 տուածը, որ մեր իրաւունքներն ալ
 պաշտպանէ, միջոց մը փնտունք
 հարուստները զրկել իրենց այդ
 պաշտպանէն ու այսպէս սկիւրացնե-
 լով զանոնք. փորձենք փրկել անոնց
 ձեռքէն մեր անկապաւելի իրաւունք-
 ները:

Գրանիկ Մազմանեան
—)(—

Ընկերութիւնը լաւ վիճակի մէջ գրուեցաւ շնորհիւ անձնուէր պարտնէրու աշխատութեանը . այնպէս որ մասաւորապէս ամսական 40 ֆր. քի գումար մը ապահովուած էր , ու զեռեւս աւելնալու ալ յոյսը կար . որոյ վրայ յենլով խօսք տուած էինք մինչեւ նոր տարի բանալ ընթերցարանը : ներկայացումը արուեստաւ , ամբողջովին վճարուեցաւ 200 ֆրանք շէնքին ախրով , ու ընթերցարանի բոլոր գոյքերը սեղափոխուեցան ազգ. վարժարանի մէջ սենեակը :

Նոր տարին հասաւ , մենք մեր խոստումը չկրցինք կատարել , որովհետեւ նիւթապէս գոհացուցիչ վիճակ մը չունէր ընկերութիւնը , մինչեւ ամէն ժամանակ մեր հաւաքիչը ամէն բաժանորդներէն առանց բացառութեան , առհասարակ կրնար գանձել բաժնեկիւնը , բայց այլեւս նոքա ամէնքն ալ սկսած էին ետ քաշուիլ . հաւաքիչը մի քանի անգամներ անոնց ոտքը երթալէն ձանձրանալով կը ջնջէր անունները տետրէն . գործը երթալով թուլնալու վրայ էր . ամէնուն քով ետանդը մարած էր . այս տեսնելով վարչական ժողովի անդամներէն մի քանին , յառաջիկային պատասխանատուութենէ զերծ մնալու համար , սուին իրենց հրաժարականները , որովհետեւ այս վիճակը դարմանելու համար եղած երեք ընդհանուր ժողովներուն մէջ բաժանորդները իրենց բացակայութեամբ փայլեցան : Ի՞նչ ընել պէտք էր . որովհետեւ ընկերութեանս գոյքերը չէինք կրնար մի որ եւ է տեղ յանձնել . նաեւ պատրաստի գտնուած գրամը , որ պէտք էր միմիայն իր նպատակին ծառայէր , այս պատճառաւ վարչական մարմնին մնացած անդամները որոշեցին սպասել մի լաւ ժամանակի , կամ սեպտեմբեր ամսուն . որպէս զի ներկայացուիներով կարենան ընթերցարանին տարեկան առնուազն 1000 ֆրանքը ապահովել , ինչ որ ընելը մեր անձնական կարողութիւնը չէր ներէր :

Ֆէրիս Ֆէրիս (Մնացածը յարողով)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Գրիգորիոս եպս. Ալէքսանդրի վիճակը շատ ծանր է , անցեալ շաբաթ օր բժիշկներու խորհրդակցութիւն մը տեղի ունեցեր է , որը յուսալի եզրակացութիւն մը չէ եկած : Սրբազանը իր վաղեմի բարեկամ Թէլեանը , զոր ուղած էր տեսնել , ճանչցած չէ : Սրբազանի բարեկամները յանձնարարած են Պօլսոյ ամենաճարտար բժիշկները հրաւիրել :

Տիրգրանակերտի տեղապահ եղեկիէլ վրդ. կրկնակի դիմումներուն վրայ ամերիկեան որբանոցի 150ի չափ որբերը և որբուհիները սկսեցին ամէն օր ազգային վարժարան յաճախել , կիրակի օրերն ալ ազգային եկեղեցի :

Պ. Թ. Փասուլեանցի Բարիզի հիւանդանոցներէն մէկուն մէջ բուական մնալէ վերջը դուրս ելած է . բոլորովին ապաքինելու վրայ է և փափաք ունի Բարիզէն մեկնելէն առաջ ներկայացում մը կազմակերպել հոն :

Կը կարծուի թէ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան

խնդիրը վերջանալէ յետոյ . Ազգ. վարչութիւնը պիտի զբաղի Ազգ. թամարի կաթողիկոսին ընտրութեան խնդրով : Վանէն թէ ներսէս եպս. և թէ Վահրիճ վրդ. այդ պէտքը կը զգացնեն :

Կրօն. ժողովը իր հաւանութիւնը տուած է որ Վահրիճ վրդ. ժամանակ մը եւս մնայ Վանայ հայերու հովիւ ներսէս եպիսկոպոսին քով իբր օգնական :

Ներսէս եպիսկոպոսին Վանայ վիճակին նկատմամբ զրկած տեղեկագիրը կարգացուած է ժողովոյ մէջ : Ժողովը գոհ մնացեր է եպս. ի պաշտօնավարութենէն . բայց ինքը եպս.ը շատ ալ գոհ չէ իր վիճակէն օժանդակող ձեռքերու պէտքը կը զգայ և ատոր համար Վահրիճ վարդապետը չուզեր թողուլ :

Վանայ եկեղեցական այդ կազմակերպեալ վիճակը ամերիկացի միսիօնար Բէյնօլսի գործին եկած չէ :

Ռուսներոյ Պօթուշան քաղաքէն կիմացնեն թէ՛ կարգալուծ Աթմանաս քահանան կրօնաւորի զղեստովը (խահուէճիութիւն) կընէ : Կրօնական ժողովը որոշած է Ռուսիէն կառավարութեան միջոցաւ Աթմանասին քահանայական զգեստները հանել տալ :

Նոյն ժողովը նկատողութեան առնելով գաւառներէ որբանոցներու և նպաստի մասին գրածը , որոշած է երկերկու ամսական կանխիկ զրկել , որպէս զի այժմէն ձմեռուան պարէն հայթայթիւն :

Նպաստից յանձնաժողովը նկատողութեան առեր է էրզրումի տեղապահ Զաւէն վրդ. ի մէկ գիրը , որով կը ծանուցանէ թէ քաղաքին ամերիկեան որբանոցին հայ որբերը ազգային եկեղեցին չեն զրկուիր , իրենց կրօնական կրթութեան խնամք չի տարուիր : Նոյնիմաստ ուրիշ գրութիւններ ալ ստացուած են :

Կիմանանք թէ Ռուսներէ մէջ կիրակի օր խոսովութիւններ ծագած են «չը յիշուի» պատճառաւ : Ստուգութիւնը դեռ յայտնի չէ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոռոմի Անսալտօ հաստատութեան 2000ի չափ գործաւորները և ձենովայի ծովային բանւորները որ գործադուլ ըրած էին , դեռ աշխատութեան չեն սկսած : Մինչեւ մօտ օրերս խաղաղ էին , բայց հիմա անոնց մէջ գրգռում կը նշմարուի . որովհետեւ կառավարութիւնը ձերբակալած է անոնցմէ մի քանին իբր պետեր : Ըստ երեւոյթին կառավարութիւնը չուզեր որ գործաւորները և անոնց աէրերը միասին համաձայնութեան հանգին :

Պօլսէն «Թան»-ին կը հեռագրեն .

Ահմէա ձէլալէտտին փաշա , որ 30,000 տաճկական լիբայով Խարիզ զրկուած էր երիտասարդութեանը կաշառելու համար . իր պատուիրակութեան մէջ յաջողած է և հիմա վեց «երիտասարդ»-ութեան Պօլիս կը տանի :

Սուլթանը ծրագրած է Վըլազլին մօտիկ հողի մը վրայ նոր մեծ պալատ մը շինել որ երկու միլիոն ֆրանքի պիտի նստի :

Աստրիա , Էկեբի , Ախիքովերը Գերմանները մեծ խոսովութիւններ հանած են կառավարութեան դէմ : Կրայիլիայի մէջ 500 հոգի է բաղկացած խումբ մը յարձակում գործած է զանազան հաստատութիւններու վրայ , աղբային երգեր երգելով : Ժանդարմները կրակ ըրեր են յարձակողներուն վրայ : չորս սպաննուածներ կան և բազմաթիւ վիրաւորուածներ :

Անգլիական ժէնէրալ Շէրմսիդ վերջնականապէս թողած է Կրէտէն Անգլիա մեկնելու համար : Անգլիական զօրքերու հրամանատարութիւնը յանձնուած է փոխ-գնդապետի մը :

Թիւրք կառավարութիւնը Բէտիմօէն հեռագրով ուղած է գաղթելու զմահաճականներու ցանկը , որպէս զի անոնց փոխադրութեան համար նաեւ զրկէ :

Լօրտ Կիչները Գահիրէէն Խարթում գացած է : Սուտանը տարւոյս վերջերը վերջնականապէս պիտի բացուի լիակատարութեան համար :

Անգլիական թերթերուն Նիւեթօրքէ կը հեռագրեն որ հոն զարհուրելի աաքը կը տիրէ : Օգոստոս 11ին տաքէն 17 հոգի մեռեր են :

Փօրթօ-Բիկօ կղզիին վրայ սարսափելի փոթորիկ եղած է . 2500 հոգի հողի տակ ծածկուեր են : 1000ի չափ վիրաւորեալներ կան , մօտ 2000 դեռ գտնուած չեն :

Սերպիոյ Ալէքսանտր թագաւորը իր ծննդեան տարեգարձին , Նիշ , ըսած ճառին մէջ յայտարարեր է .

«Մինչեւ օրս ես , թագաւորս , կը վարուէի արմատական-կուսակցութեան և անոր պետերուն հետ . բայց այսուհետեւ , քանի որ այդ կուսակցութեան պետերը , իմ հօրս , նախկին թագաւորին կեանքին դէմ դաւաղութիւններ կը կազմէն , չը պիտի խնայեմ զանոնք . թո՛ղ գիտնան , Այսուհետեւ անոնք ինձմէ ոչ պիտի թիւն և ոչ բարեք պիտի պատեն » :

Էրզրումի զօրաց հրամանատարը նոր զօրք պահանջած է թուրքօ-ռուսական սահմանազլխուն վրայ գտնուած ամբարձրութիւնները զօրացնելու և աւելի լաւ պաշտպանելու համար :

Բարիզի մէջ նոր խոսովութիւններ տեղի ունեցեր են : Այս անգամ անիշխանականներ են : Ստիկանաթեան և խոսովարարներու մէջ մեծ ընդհարում տեղի ունեցած է , ստիկաններէն շատ վիրաւորեալներ կան : Անիշխանականներու պետերէն ձերբակալուած է հռչակաւոր Սեբաստեան Փօր և իր բարեկամներէն մի քանին :

Օգոստոս 10ին Պ. Լապօրի , գացեր է Տրէյֆուի դատը պաշտպանելու : Դատը բացուելէն քանի մը վայրկեան առաջ մտեր է դատարանը ներկայ գտնուողները մեծ յուզումով ընդունել են հռչակաւոր փաստաբանը : Ժէնէրալ Պիլեօ և Լէրսիէ , Տրէյֆուսը մեղադրողները , սեղմեր են Լապօրիի ձեռքը :

Դատավարութեան նիստը բացուելէն առաջ , նախագահ Պ. Փուօստ հետեւալ ճառն ըսած է .

«Տէր Լապօրի թոյլ տուէք ինձ հրապարակաւ յայտնել դատական խորհուրդի զգացումները այն ստոր դաւաղութեան պատճառաւ , որի զօնը պիտի բլլալիք : Այդ անորակելի գործողութիւնը , ինչպէս ամէնքի , այնպէս եւ մեր զգուանքը յարոյց : Բախտաւոր ենք , որ այն ծանր հետեւանքը չունեցաւ , որ առաջին վայրկեաններուն կը կարծուէր : Մեզ մեծ ցաւ կը պատճառէր ձեր բացակայութիւնը : Լապօրի , չը նայելով նախագահի խնդրանքին որ պատասխանելու յոգնութիւնը չընէ , սիրուն եւ իր տաղանդին յարմար կերպով պատասխան մը տուած է :

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Ռուսչուր , Տ. Պ. Պ. — Բ. տարւոյ երկրորդ վեցամսեան կը պարտիք : Ամերիկա , Մ. Պ. — ձիշղ վեց տօլար ստացուած է :

Ա Ձ Դ

Ամերիկանեանցի դպրոցը կը բացուի սեպտեմբեր 1ին : Փափագողներէն կը խնդրուի դիմել Ամերիկանեանցի Պալկանսքայ փողոց , թիւ 239 : Ամէն օր ժամը 10—12 առաւօտ , և 4—6 երեկոյ , 2—4

Ա Ձ Դ

Կիմնագիական կրթութիւնով երիտասարդ մը կը փափաքի Ֆիլիպի վարժարանը դասախօսել Պուլկարիէնի , Պասմութեան , աշխարհագրութեան և բնական գիտութեան , զիմել խմբագրութեան :

ԺՈՂՈՒՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՄԸ Բաւսու-Բարիպակ Գրեց ԲԱՅԱ-ԳԱՍՊԱՐ : Պուլկարիոյ մէջ գինը 50 սանթիմ , իսկ արտասահմանի համար 60 սանթիմ : Ճանկացողները թող գիտեն Շարժուի խմբագրութեան :